


Ապատեղեկատվություն COVID-19-ի պատվաստանյութի մասին



COVID-19 համաճարակը մարտահրավեր է եղել մեր համայնքի համար: COVID-19-ի դեմ պատվաստանյութերի մասին ապատեղեկատվությունը միայն ավելացրել է այս շփոթությունը: Եկեք հերքենք որոշ տարածված սխալ պատկերացումներ և բացահայտենք COVID-19-ի դեմ պատվաստանյութերի մասին ճշմարտությունը:

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԵՐ


ԿԵՂԾԻԸ: COVID-19-ի դեմ պատվաստանյութերը շատ արագ են ստեղծվել և չեն կարող անվտանգ լինել:

ԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ: Չնայած արագ մշակմանը, ոչ մի քայլ բաց չի թողնվել COVID-19-ի դեմ պատվաստանյութի անվտանգության և հաստատման գործընթացում: Այս հսկայական ձեռքբերումը հնարավոր է եղել համաշխարհային մակարդակով համագործակցության, ավելացված ֆինանսավորման և տարիներ շարունակ օգտագործվող գիտական մեթոդների շնորհիվ: Անվտանգությունը միշտ եղել է և կշարունակի լինել գլխավոր առաջնահերթություն: Ամբողջ աշխարհում գիտնականները և առողջապահության ոլորտի աշխատողները անխոնջ աշխատում են՝ ապահովելու, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերը մասն անվտանգ և արդյունավետ բոլորի համար:

ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՉԴՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԵՂԾԻԸ: Պատվաստանյութերն առաջացնում են լուրջ կողմնակի ազդեցություններ:

ԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ: Աշխարհում միլիարդավոր մարդիկ ստացել են COVID-19-ի դեմ պատվաստանյութ: Մարդկանց մեծ մասն ունենում է միայն թեթև ախտանիշներ, ինչպիսիք են ուսի ցավը և մի փոքր հիվանդ զգալը մեկ-երկու օր: Լուրջ կողմնակի ազդեցությունները ծայրահեղ քիչ են եղել: Իրականում լուրջ կողմնակի ազդեցությունների հավանականությունը պատվաստանյութից շատ ավելի փոքր է, քան COVID-19-ից: Պատվաստված լինելու օգուտները՝ ծանր հիվանդությունների, հոսպիտալացման և մահվան կանխարգելում, գերազանցում են փոքրիկ վտանգները:




ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿԵՂԾԻԸ: Ես առողջ եմ և հաճախ չեմ հիվանդանում, հետևաբար՝ COVID-19-ի դեմ պատվաստանյութի կարիքը չունեմ:

ԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ: Նույնիսկ առողջ մարդիկ կարող են ծանր հիվանդանալ COVID-19-ով: Նաև, եթե Ձեր թեստի արդյունքը դրական լինի կամ ախտանիշներ ունենաք, Դուք ստիպված կլինեք բացակայել աշխատանքից, դպրոցից, ընտանեկան հավաքույթներից և հասարակական միջոցառումներից:



Ապատեղեկատվություն COVID-19-ի պատվաստանյութի մասին



ՏԱՐԱԾՎԱԾ ԱՅԼ ՍԽԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ

ԿԵՂԾԻՔ: Ես ունեցել եմ COVID-19, հետևաբար՝ պատվաստումից օգուտ չեմ ստանա:

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: COVID-19-ի դեմ պատվաստանյութը մտնում է լավագույն պաշտպանությունը COVID-19-ով վարակվելուց՝ անկախ դրանից՝ Դուք արդեն ունեցել եք COVID-19, թե ոչ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նախորդ վարակից ստացած անվարակունակությունը (իմունիտետ) ժամանակի ընթացքում թուլանում է, և որ պատվաստանյութերն ավելի լավ պաշտպանություն են ապահովում ծանր հիվանդություններից, երկարատև COVID-ից և մահից, քան բնական անվարակունակությունը:

ԿԵՂԾԻՔ: Ես արդեն ստացել եմ COVID-19-ի դեմ ավելի վաղ եղած պատվաստանյութերը, ես ամենանորի կարիքը չունեմ:

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Ինչպես բոլոր վիրուսները, COVID-19-ը կարող է մի փոքր փոփոխվել ամեն անգամ, երբ փոխանցվում է մի նոր մարդու: Այս փոփոխությունները կարող են առաջացնել վիրուսի նոր տարբերակ կամ «ենթատեսակ»: Եթե ենթատեսակը շատ է տարբերվում բնօրինակից, պատվաստանյութը կարող է թարմացման կարիք ունենալ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ COVID-19-ի պատվաստանյութից առաջացող անվարակունակությունը ժամանակի ընթացքում անհետանում է: Թարմացված պատվաստանյութերը կվերականգնեն իմունային պաշտպանությունը ծանր հիվանդություններից: COVID-19-ից առավելագույն պաշտպանվածության համար Դուք պետք է ժամանակին ստանաք բոլոր առաջարկվող պատվաստանյութերը:

ԿԵՂԾԻՔ: COVID-19-ի դեմ պատվաստանյութը կարող է ազդել վերարտադրողականության և սեռական հասունացման վրա:

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Կլինիկական փորձարկումներին մասնակցած հազարավոր մարդկանցից չի եղել որևէ հաղորդում պատվաստանյութից առաջացած անպտղության մասին: Իրականում պատվաստանյութ ստացողներից շատերը արդյունավետ կերպով բեղմնավորվել են: Չկա նաև ապացույց երեխաների մոտ ուշացած սեռական հասունացման մասին՝ COVID-19-ի կամ որևէ այլ պատվաստանյութ ստանալուց հետո:

ԿԵՂԾԻՔ: COVID-19-ի դեմ պատվաստանյութը կփոխի իմ ԴՆԹ-ն:

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Տեղեկատվական կամ ինֆորմացիոն ՌՆԹ (իՌՆԹ՝ mRNA) պարունակող պատվաստանյութերը չեն փոխում ԴՆԹ-ն: COVID-19-ի պատվաստանյութի իՌՆԹ -ն չի կարող մտնել բջջի միջուկ, որտեղ ապրում է ԴՆԹ-ն: իՌՆԹ -ն օգնում է ակտիվացնել իմունային պատասխանը COVID-19-ին, այնուհետև Ձեր բջիջները քայքայում են իՌՆԹ-ն, որպեսզի ազատվեն դրանից՝ չազդելով մարմնի այլ համակարգերի վրա:

